

Արձանագրություն N 153

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2016թ-ի մայիսի 30 -ի նիստի Օրակարգ

1. 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի սոցիալաբանության արդյունքների քննարկում / զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. 2015-2016 ուստարվա առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական քննությունների արդյունքների ամփոփում/ զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
3. Թեկնածուական ատենախոսության թեմաների հաստատում /զեկ.՝ Խ. Գալստյան/:
4. Թեկնածուական ատենախոսության ղեկավարի վերահաստատման հարցը /զեկ.՝ Խ. Գալստյան/:
5. Ասպիրանտների ատեստավորման հարցը/զեկ.՝ Խ. Գալստյան/:
6. Շրջանավարտների որակավորման ավարտական աշխատանքների վերաբերյալ մեթոդական հանձնարարականների տպագրության երաշխավորության հարցը/զեկ.՝ մեթոդխորհրդի նախագահ Լ. Վարդանյան/
7. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.
ա/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության հեռակա ուսուցման ասպիրանտ Լիլիթ Սարիբեկյան՝ «Փափուկ ուժը» ԱՄՆ-ի լատինաամերիկյան արտաքին քաղաքականության մեջ» ԻԳ.00.04 - «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:
Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Տիգրան Քոչարյանին:
բ/ Հանրային կառավարման ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Արփինե Ասատրյան՝ «Որոշումների կայացման և հանրային քաղաքականության համակարգման գործընթացն ու դրա առանձնահատկությունները ՀՀ պետական կառավարման համակարգում» ԻԳ.00.02 -«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:
Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ալեքսանդր Մարգարովին:
գ/ ԵՊՀ հայցորդ Արման Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Հայաստանի երեք հանրապետությունների քաղաքական համակարգերի համադրական քննություն» ԻԳ.00.01 -«Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:
Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Աշոտ Ենգոյանին:

դ/ ԵՊՀ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Տաթևիկ Մանասյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Ժամանակակից հայոց ազգային գաղափարախոսության ձևավորման հիմքերը» ԻԳ.00.01 -«Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Աշոտ Ենգոյանին:

ե/ Արցախի պետական համալսարանի հայցորդ Ալվարդ Աբրահամյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Արցախի պետականակերտման հայեցակարգի ձևավորման պատմա-քաղաքական նաախադրյալները» ԻԳ.00.01 -«Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Գիտական ղեկավար վերահաստատել փիլ. գիտ. դոկտոր, պրոֆ. Հենգել Մանուչարյանին:

զ/ ԵՊՀ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի հայցորդ Անժելա Մնացականյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «ՀՀ արտաքին ոազմական քաղաքականություննը անվտանգության ապահովման համատեքստում» ԻԳ.00.02 -«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Տիգրան Քոչարյանին:

2. ա/ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Նարեկ Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի գիտական ղեկավար վերահաստատել փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ. Մանուչարյանին:

բ/ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Կնյազ Սարոյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար վերահաստատել քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Աշոտ Ենգոյանին:

3. Ատեստավորել ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի առկա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ **Էրիկ Դավթյանին**, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի առկա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ **Դավիդ Սարկիսյանին**, ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի առկա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ **Մհեր Հակոբյանին**:

4. Դոցենտ Լ. Վարդանյանի կազմած “Շրջանավարտների որակավորման ավարտական աշխատանքների վերաբերյալ մեթոդական հանձնարարականները” երաշխավորել տպագրության:

**ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի ղեկան, Գիտական խորհրդի
նախագահ, պրոֆ.**

Գ. Պետրոսյան

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների

Ճակույտետի Գիտական խորհրդի քարտուղար, դոց.

Խ. Գալստյան